

ՀՀ, ք. Երևան

Նուբարաշեն, 10 փող, տուն 6

Հեռ: 57 28 42

ՏԳՀ, Երևան, Մյասնիկյանի պողոտա 5/1

Առուդիտորական գործունեության լիցենզիա թիվ ԱՄ N 048 առ 02.08.2006թ.

տրված ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից

**Անկախ առուդիտորական եզրակացություն**

**Ներկայացվում է «Գյումրին առանց տնակների» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին**

Մեր կողմից իրականացվել է «Գյումրին առանց տնակների» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների առուդիտորոնք ներառում են 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ բացատրական ծանոթագրություններ:

**Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը**

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է սույն ֆինանսական հաշվետվությունները փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան կազմելու և արժանահավատորեն ներկայացնելու համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

**Առուդիտորի պատասխանատվությունը**

Մենք պատասխանատու ենք ՀՀ կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի թիվ 1931-Ն որոշմամբ հրապարակված առուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված առուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները և պլանավորել ու անցկացնել առուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Առուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնք ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների առկայության ռիսկերի վերաբերյալ առուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ առուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, բայց ոչ Հիմնադրամի ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար:

Առուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ համապատասխան առուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Կարծիք**

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Հիմնադրամի 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

ՀՀ, ք. Երևան  
10 ապրիլի 2017թ.  
Տնօրեն  
Առուդիտոր

Մ. Պետրոսյան  
Ա. Մխիթարյան

